

**Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2016թ.
նոյեմբերի 24-ի արձանագրություն**

Արձանագրություն N 2-11/16

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի 2016 թ.-ի
նոյեմբերի 24-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ. (տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գասպարյան Պ.Յու. (տ.գ.թ., դոցենտ), Խաչատրյան Գ.Մ. (ֆ.մ.գ.թ.), Հարությունյան Մ.Ա. (պ.գ.թ.), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ., Բաղունց Գ. Ռ., Զաքարյան Գ.Է. (ուսանող), Մնացականյան Հ.Գ. (ուսանող), Պետրոսյան Ա.Կ. (ուսանող), Աբաղյան Մ.Գ. (ուսանող), Ծատրյան Ս.Բ. (ուսանող), Առուշանյան Գ.Ա. (ուսանող)։

Հրավիրված էին հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ.դոկտոր-պրոֆեսոր.) և Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ)։

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի համար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի մասին.
- 2.«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու» կարգի մասին.
- 3.«Պոմիդոր» ծրագրի մասին.
4. Այլ հարցեր.

Լսեցին 1-Գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեց «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի համար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգը։

Որոշեցին 1-Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով հետբուհական մասնագիտական երրորդ աստիճանի համար ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգը։

Լսեցին 2-«Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու» կարգի մասին.

Որոշեցին 2-Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին տարակարգեր շնորհելու» կարգը։

Լսեցին 3- «Պոմիդոր» ծրագիրը գիտխորհրդին ներկայացրեց ագրոնոմիայի ամբիոնի կ.գ.դ., պրոֆեսոր՝ Ա.Ա. Գուլյանը: Առաջարկվեց դաշտային հետազոտությունների միջոցով պարզել պոմիդորի հայկական 11 սորտերից տեղի հողակլիմայական պայմաններին ավելի լավ հարմարվածները և դրանք առաջարկել գյուղատնտեսական արտադրությանը:

Որոշեցին 3- Հանձնարարել ռեկտոր՝ Հ.Վ.Թորմաջյանին ԼՂՀ համապատասխան նախարարությունների հետ աշխատանքներ տանել նշված ծրագրի իրականացման համար անհրաժեշտ 0,5հա ջրովի տարածք ձեռք բերելու նպատակով:

Լսեցին 4- ՇՏՀ պրոռեկտոր, գ.գ.թ. դոցենտ՝ Ս.Բ.Գալստյանի կողմից ներկայացրած «Հողի անթև մշակում» ձեռնարկի մասին:

Որոշեցին 4- ՇՏՀ պրոռեկտոր, գ.գ.թ. դոցենտ՝ Ս.Բ.Գալստյանի կողմից ներկայացրած «Հողի անթև մշակում» ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թորմաջյան
Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան